

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

### ԻՉՄԻՐԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿՈԶՀ

Պատմական մերզանէից՝ որ ի Մայրաքաղաքս, ի սփիւռս Թուրքիոյ և Արտասահմանի, ողջոյն տիրաւանդ և օրհնութիւն երկնապարգի։

Հայաստանի զանազան գաւառներաւ և կիլիկոյ այլ և այլ կողմերու ժողովրդեան կարօտութիւնը իր ծայրագոյն աստիճանին հասած է և համատարած սովը լեցնելով ընկը ճուած ու ջախչախուած ժողովրդեան թշուառութեան չափը՝ սկսած է նախճիբներ գործել, մանաւանդ ձմբան այս սաստկաշունչ ենդանակին՝ երբ հեռագիբն ու թղթաբերն ամէն օր ամէն կողէ կը հասցնեն մեղ սովալլուկ բազմութեան օգնութեան աղաղակները, ողբագին կոծերը, օրհասականի հոնդիւնի պէս աղեխարշ, և կը գուգեն կեանքերու կորուստը, որք յառաջ կուգան անսուազութեան հետեւանօք։ Ազգային Պատրիարքարանը նպաստից Յանձնաժողովոյ միջոցաւ թէպէտե ամէն միջոց ձեռք տուած է դարման տանելու այս գառն կացութեան և սպառնացող մեծ վտանգին, թէպէտե մեր ողորմածասէր ժողովուրդը անտարբեր չի հանդիսանար այս ծանր աղետին ու կը կարկառէ իր օգնութեան ձեռքը՝ փութացնելով սիրայօժար իր նպաստի ու ողորմրւթեան լուժան, սակայն բաւական չըլլար ան մեղմացնելու չարիքը ահաւոր աղեսին, որ կը սպառնայ գոյսութեան տարաբաղդ կեանքերու, որք յոյժ ստուար են թուով։

Երբեք հայր հասարակաց կը փութամ պարզել կացութիւնը մեր բարեպաշտ ժողովրդեան, և այս կոչը կուղղեմ անոր ամեն գասակարգի անդամոց անխտիր, խնդրելով ամեն ոք՝ վաճառական թէ խանութպան, արհեստաւոր թէ մշակ, իր զգացմանց կարողութեանն չափով բերէ ընծայէ մեղ իր ձեռնտութիւնը՝ իր օգնութեան

լուսան, որ սահմանուած է կեանքեր խլելու թշուառութեանց ու մահուան ճիրաններէն, դիմագրաւ կենալու մեծ աղետին:

Յուսալից ենք որ մեր սիրեցեալ և պատուական ժողովուրդը՝ որ ի Տաճկաստան, ի Ռուսիա, ի Հնդիկս, ի Պարսկաստան, յԱմերիկա, յԵւրոպա և այլուր, կշռելով աղետին մեծութիւնը, անոր անդարմանելի հետեանքներըն և մեր վրայ ծանրացող պարտականութիւնը, յօժարակամ սիրով պիտի պատասխանէ մեր կոչին և գործնապէս ցոյց պիտի տայ այն գորտվալից սէրն ու համակրանքը, զոր կը տածէ մեծապէս առ իւր տառապեալ և օրհասական համարիւն եղբայրներն ու առ Ազգն համօրէնն Կ'օրհնենք համոյն նուիրատուներն և կը հայցեմք որ Նախախնամողն Տիեզերաց, Պարգևիչն Բարեաց ի հաճոյս իւր ընդունի անոնց զուարթաւատ տուրքն ու ողորմութիւնն և լնու զիրենք բեղուն բարեօք ու մշտատե բարօրութեամբ:

Աղօթարար

Պատրիարք Կ. Պօլոսյ

Մատքես Արքեպիսկոպոս

## ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Ներկայ 1909 թուին «Արարատ» ամսագրի բաժանորդներին Ամենապատիւ Տ. Տեղակալի թոյլտւութեամբ կուղարկուի ձրիաբար իրին պարզի Պօլոս պատրիարքի Սուրբ գրքի մեկնութիւնը «ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ ՀԻՆԳ ԴԱՐՈՒՅՑ» ելեք հատող բաղկացած 1828 երեսից, որ հատով վաճառելիս արժէ 2 ռ. 80 կ.: Այն բաժանորդները, որոնք կցանկանան յիշեալ եռահատոր զիրքը ստանալ,